*Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...*

# ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS 2020, դեկտեմբեր, № 4 (49) БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԸ ՏԱՎՈՒՇՈՒՄ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի անդամները (Գ. Մելիքյան, Ա. Ավագյան, Թ. Կահվե, Ս Մուրադյան, Շ. Շմավոնյան) սեպտեմբերի 26-ին մեկնեցին սահմանամերձ Տավուշի մարզկենտրոն՝ Իջևան քաղաք՝ մարզպետ Հայկ Չոբանյանի նստավայրում անցկացնելու արտագնա նիստ: Դիլիջանից այս խմբին միացավ նաև հիմնադրամի բարեկամ Արտակ Բոջիկյանը:

Նպատակը Տավուշի սահմանին հուլիսյան դեպքերից հետո սահմանամերձ գյուղերում ռազմական գործողություններից տուժած և անապոհով ընտանիքներին հիմնադրամի բարեկամների դրամական և նյութական նվիրատվությունների հանձնումն էր, մարզպետարանի հետ հետագա համագործակցության ու ծրագրերի մշակումը:

Հանդիպումը կայացավ մարզպետի աշխատավայրում: Ողջունելով հյուրերին՝մարզպետ պրն. Հայկ Չոբանյանն ընդհանուր գծերով ներկայացրեց հայ-ադրբեջանական սահմանին կատարված հուլիսյան դեպքերը, նախահարձակ ամբարտավան թշնամու պարտությունն ու նպաստավոր բարձունքների գրավումը մեր զինվորականների կողմից: Ապա նա անդրադարձավ բուժվող վիրավորներին, մարզի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակին և զարգացման հեռանկարներին: Այնուհետև ներկաների միջև ծավալվեց բավականաչափ տևական շահագրգիռ զրույց, որի ընթացքում արծարծվեցին օրախնդիր բազմաթիվ հարցեր:

Հյուրերը տեղում ծանոթացան մարզում տիրող իրավիճակին, քննարկեցին լուծելի մի շարք խնդիրներ, որոնցից էին մարզի տասը ուսանողների կրթաթոշակով ապահովում, մարզի դպրոցներին, մանկապարտեզներին մշակութային կառույցներին տրվելիք պարբերական օգնությունը, ԵՊՀ ուսանողների միջոցով ամենամյա ծառատունկի կազմակերպումը:

Դրվագ արտագնա նիստից

Հանդիպման ավարտին մարզպետ Հ. Չոբանյանը շնորհակալություն հայտնեց հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանին և հոգաբարձության խորհրդի մյուս անդամներին ստացած առձեռն երեք միլիոն դրամ օգնության, ուսումնական, գեղարվեստական ու գիտական գրականության և կենցաղային այլ պարագաների համար:

Արդյունավետ էր արտագնա նիստը Տավուշի մարզպետարանում: Հուզումնալից հրաժեշտի պահին հնչեցին մարզի ղեկավարության հետ համագործակցության և նորանոր հանդիպումների հավաստումներ:

Ո՛չ հյուրերը, ո՛չ էլ մարզի ղեկավարները չէին կարող կռահել, որ հաջորդ օրն իսկ՝ սեպտեմբերի

27-ի լուսադեմին, երեք թուրք գեներալների հրամանատարությամբ, ավելի քան 200 թուրք ռազմական մասնագետներով ու հատուկ ջոկատայիններով, մի քանի պետություններից ներգրավված հազարավոր վարձկաններով համալրված, զանգվածային ոչնչացման միջազգայնորեն արգելված ամենաարդիական զենքերով՝ ճշգրիտ ու ավերիչ նշանառությամբ հրթիռահրետանային կայանքներով, ֆոսֆորային ու կասետային ռումբերով անօդաչու թռչող հարվածային օդանավերով զինված ադրբեջանական բանակը կհարձակվի Արցախի և Հայաստանի սահմանների վրա, խաղաղության ու քաղաքակրթության դեմ կսկսի հյուծիչ ու ավերիչ ահաբեկչական դաժան պատերազմ, որը կտևի մեկուկես ամիս: Հարձակման թիրախ դարձան ոչ միայն Արցախի պաշտպանական դիրքերն ու ռազմական կառույցները, այլև քաղաքացիական խաղաղ բնակչությունը, մշակույթի կենտրոնները, եկեղեցիները, կրոնական ու պատ-մամշակութային հուշարձանները, դպրոցներն ու մանկապարտեզները, անգամ հիվանդանոցներն ու ծննդատները: Մեր դեմ կռվում էին Ադրբեջանն ու հզոր բանակ ունեցող ՆԱՏՕ-ի անդամ Թուր-քիան: Եվ ոչ միայն նրանք:

Ցավոք, պարզվեց, որ, այդպիսի լայնածավալ պատերազմի պատրաստ չէինք: Ունեցանք ցավալի պարտություն, հազարավոր զոհեր, բազմաթիվ անհետ կորածներ ու հաշմվածներ, տարածքային ծանրածանր կորուստներ ու տեղահանված բազում անտուն հայրենակիցներ…

Այսօր մենք ունենք նոր իրավիճակ, նոր խնդիրներ, նոր տքնություններ, և ուրեմն՝ հիմնադրամի գործունեության նոր ճակատներ…

Մարզպետարանի մուտքի առջև: Ձախից աջ՝ Ն. Գրիգորյան, Թ. Կահվե, Ս. Մուրադյան,, Շ. Շմավոնյան, Գ. Մելիքյան, Ա. Բոջիկյան, Ա. Ավագյան

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻՆ
TAVUSH DONATIONS

| | | |
|---|---|---|
| 1 | Anahit Fund | $ 1000 |
| 2 | Aladadi Vahan | $ 476 |
| 3 | Aghabekian Razmik | $ 100 |
| 4 | Aleksandryan Irina | $ 500 |
| 5 | Kahve Tony | $ 500 |
| 6 | Khachatryan Aida Chobanyan Aram | $ 1 000 |
| 7 | Kizirian Rozemari-(*through Nane Jangozian)* | $ 100 |
| 9 | Marnar –(*through Nane Jangozian)* | $ 200 |
| 8 | Halebi Gabriel & Anahit | $ 500 |
| 10 | Shanazarian Henrik | $ 521 |
| 11 | VJ & Associates | $ 500 |
| 12 | Vartanian Armond | $ 500 |
| 13 | Yegiyants (Yeghunts) Artashes | $ 100 |
| 14 | Yegiyants George & Matilda | $ 100 |
| 15 | Yegiyants Sara | $ 150 |
| | | $ 6247.00 |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH GOVERNOR

25 դեկտեմբերի 2020թ.

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ
ընտանիքների» հիմնադրամի տնօրեն պարոն Գուրգեն Մելիքյանին

Հարգելի պարոն Մելիքյան

Հայտնում եմ իմ երախտագիտությունը 2020 թվականին Տավուշի մարզում իրականացրած ծրագրերի և աջակցության համար:

Ուրախ ենք Ձեզ հետ հաստատված գործընկերության համար՝ հանուն մեր հայրենիքի և ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման, մեր ներկա և ապագա հաջողությունների: Համոզված եմ, որ մեր համագործակցությունը շարունակական կլինի:

Շնորհավորում եմ զալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթում եմ առողջություն, խաղաղություն և ամենայն բարիք:

Հարգանքով՝

Հայկ Չոբանյան



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25.12.2020

Սույն արձանագրությամբ փաստում ենք, որ Տավուշի մարզում անապահով և պատերազմական գործողություններից տուժած ընտանիքներին աջակցության նպատակով «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամը հանձնեց և Տավուշի մարզպետարանն ստացավ 3.010.000 ՀՀ դրամ, կոշիկ՝ 200 զույգ և գրքեր՝ 150 հատ:

Հայկ Չոբանյան,

ՀՀ Տավուշի մարզպետ

Գուրգեն Մելիքյան,

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի տնօրեն

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է

Երբ ավելի լայն բացվեցին հայրենիքի դռները, բուռն վերելք ապրեց նաև սփյուռքահայության հոսքը դեպի Հայաստան:

Սկսած 1988-ից՝ ավերիչ երկրաշարժի տարուց, այդ հազարավորներից մի մասի հետ, շնորհիվ Գուրգեն Մելիքյանի (ում զինվորական, քաղաքացիական պատվանունները, շքանշաններն ու մեդալները, հայրենասիրական անուրանալի ձեռնարկումները եթե թվարկելու լինենք, ամբողջ էջեր կկազմեն), ես ծանոթացա ու բարեկամացա և հիմա քաղցրությամբ եմ հիշում նրանցից շատերին՝ բարերարներ ու նվիրյալներ Տեր և Տիկին Նաջարյաններին, Սերժ և Շիլա Փափայանց ամուսիններին, Նիք Քանյանին, Ալեք Բաղդասարյանին, նրա կնոջն ու երեխաներին, ֆրանսահայ տիկին Թագուհի Ալեքսանյանին (ով իր բերած կոշիկներն ու հագուստները բաժանելիս վայր ընկավ ու վնասեց ձեռքի մատները՝ իր արյունը խառնելով Բերձորի ազատագրման կռիվներում ընկած ազատամարտիկների սուրբ արյանը), դոկտոր Վիգեն Զարգարյանին, Վարդան Ջանգոզյանին, բժիշկ և ազգային գործիչ Բաֆֆի Բալյանին, Հակոբ Ալթիբարմաքյանին...

Ո՞ր մեկին հիշես. բարեբախտաբար, նրանք շատ են; Այդ համերաշխության մեջ ես ճանաչել եմ նաև Սուրեն անունը կրող երկու անձանց՝ Սուրեն Փիրջանյանին և Սուրեն Վարդանյանին: Սուրեն անունը, ըստ Աճառյանի, նշանակում է ուժեղ, զորավոր: Սուրեն Փիրջանյանն իր զորավոր, զորեղ լինելը հաստատել էր նախքան Միացյալ Նահանգներում հիմնվելը՝ Պարսկաստանում ձեռնամարտի իր քաշային կարգում դառնալով այդ երկրի բազմակի չեմպիոն:

Սուրեն Վարդանյանի կյանքի մեծ մասն անցել էր նույնպես մի կարծր ոլորտում. Նա քարի մասնագետ է եղել՝ ձևել, հղկել ու ոգի է տվել քարին: Բայց սրանցից զատ՝ նրանց զորավորությունը կայանում է հայոց հողի նկատմամբ մեծ սիրո մեջ, այն սիրո, որ միայն զգացում չէ, այլև գործնական աշխատանք, օգնության ձեռք երկարելու պատրաստակամություն ու հավատ: Հիմա, երբ գրում եմ այս տողերը, նրանցից մեկը՝ Սուրեն Վարդանյանը, այլևս հեռացել է կյանքից: Ո՞վ գիտե, գուցե դրախտում էլ (իսկ նրա նման մարդիկ միայն դրախտին են արժանանում) ծուռ, պակաս բաներ կան, ու շտկելու կարիք կա:

Ի՞նչն է, որ մեր երկու Սուրեններին միացնում է իրար՝ միայն անո՞ւնը, ազգային դառը ճակատագի՞րը, հայրենի եզերքից տնավեր լինե՞լը, սփյուռքի անծայրություններում ինքնահաստատվելու վճռականությո՞ւնը, մայր Հայաստանի կայացման դժվարին ընթացքին բերած նպա՞ստը: Թերևս և՛ մեկը, և՛ մյուսը: Բայց հիմա, երբ փորձում եմ իմ մեջ վերակենդանացնել նրանց դիմանկարը, առաջին հատկանիշը, որ հառնում է այս պահին՝ նրանցից անբաժան ժպիտն է: Ծիծաղում ու ժպտում էին ամեն պարագայում՝ երբ ուրախ էին, երբ ճանապարհորդում էին, երբ խնջույքի մեջ էին, լուսանկարվում էին, երբ զայրանում էին ու դժգոհում իրենց տեսած այս կամ այն անցանկալի երևույթից: Ու պիտի ասեմ՝ քիչ մարդիկ կան, որոնց ժպիտն այդպես պատշաճում է իրենց դեմքերին:

Սուղ էջերը թույլ չեն տալիս երկու Սուրենների մասին խոսել հավասարաչափ: Ես շատ կուզենայի ավելի մանրամասն անդրադառնալ Սուրեն Փիրջանյանի կյանքի դրվագներին, հիշել իմ հանդիպումները նրա հետ Երևանում, Արցախում, ԱՄՆ-ում գտնվող նրա տանը: Սակայն, տուրք տալով այն իրողությանը, որ Սուրեն Վարդանյանը արդեն մեզ միայն երկնքից է նայում, ուզում եմ անդրադառնալ վերջինիս կյանքի ու մարդկային էության մի քանի դրվագների:

Եվ այսպես, շատ երկար իր մեջ պահելով հոգևոր Հայաստանը, 1983-ին առաջին անգամ նա ոտք է դնում մայր Հայաստանի հողին: Խորհրդային տարիներն էին՝ իրենց լավ ու վատ կողմերով: Ճանապարհորդության ընթացքում հանդիպած դժվարությունները շատ էին, քիչ չէին նաև անախորժ դեպքերը Հայաստանում, բայց նա եկել էր իր ժողովրդի գիրկը, այդ ժողովրդի մի մասնիկն էր իրեն պատկերացնում և հպարտությամբ էր լցված, որ աշխարհի մի ծայրում գոյություն ունի ամբողջական մի հայություն ու մեջքը շտկելու ճանապարհը բռնած Հայաստան աշխարհ: Շրջեց Հայաստանի շատ բնակավայրերում, զրուցեց Երևանում ու շրջաններում իրեն պատահած մարդկանց հետ, հիասթափվեց ու ոգևորվեց, նկարահանեց ու նկարվեց տարբեր գեղատեսիլ վայրերում ու վերադարձավ՝ իր հետ տանելով բազում հուշեր՝ ուրիշներին պատմելու ու ոգևորելու:

Հաջորդ այցելությունը 2003-ին էր՝ արդեն անկախացած Հայաստան, ոչ միայնակ, այլ քառասուն ամերիկահայերի հետ:

Ինչ-որ բաներ փոխվել էին, ինչ-որ բաներ փոխվում էին: Նկատեց, որ շատ անելիքներ կան, որ սփյուռքահայությունը անմասն չպիտի մնա այդ ամենից, որ պատերազմից հետո ոչ միշտ ճիշտ կառավարման ու սխալ օրենքների պատճառով

դժվարություններ պիտի հաղթահարվեն, ու սփյուռքը Հայաստանը որպես իր տունը պիտի ընդունի: Հայաստանում գտնվելու ողջ ընթացքում նա առիթը բաց չէր թողնում խոսելու հայրենադարձության մասին, այստեղ տուն ունենալու մասին, տարին մեկ - երկու անգամ Հայաստան այցելելու մասին: Նա ինքը այդ օրինակը տալիս էր: Տուն էր գնել Երևանում, վերանորոգել: Ամիսներով ապրում էր այստեղ՝ իր մայր երկրում՝այնքան երկարատև, որ իր հինգ մատների պես գիտեր Հայաստանի բոլոր բնակավայրերը, եկեղեցիները, տեսարժան վայրերը, նաև՝ ճանապարհներ, գետեր, լճեր, հյուրանոցներ, գյուղերի շատ անուններ:

Ամեն ինչ նաև իրենն էր համարում, ամենքին՝ իր հարազատը: Պատահում էր, որ կնոջ՝ Օլիկի, ուղեկցող բարեկամների հետ մտնում էր անծանոթ գյուղի առաջին իսկ պատահած անծանոթ տունը ու մեծ ժպիտը բեղերի տակ չթաքցնելով ասում.

— Սեղա՞ն գցեք: Շատ բան պետք չէ՝ հաց, պանիր, կանաչի, եթե ձու ունեք, եղաձու էլ պատրաստեք:

Ու մինչ տանտիրուհին սեղան կգցեր՝ զրույցի էր բռնվում տանտիրոջ հետ, հարցուփորձ անում նրա կյանքից, հետո աստծո պարգևած հացը ախորժակով վայելում էր ու իր ճանապարհը շարունակում:

Նրա գնալուց հետո միայն տանտիրոջ որդին, հարսը, թոռը պիտի տեղեկանային, որ «անծանոթը» կլորիկ գումար է դրել բարձի տակ, երեխայի գրպանը մտցրել, հարսի դարակը դրել:

«Ամերիկայում դու չես կարող հարազատի պես խառնվել մյուսներին, նրանք խորթ են քեզ»,— սա նրա խոսքն է: Ամերիկայում չես կարող նաև անծանոթ տուն մտնել ու ինչ մնաց թե հաց, այլ ջուր անգամ խնդրել: «Ամեն հայի տուն իմ տունն է» — սա էլ է նրա խոսքը, որի հաստատումն այն էր, որ իր տունը մի իջևանատեղի էր սփյուռքից Հայաստան եկած շատ-շատերի համար, նաև երիտասարդների համար, որոնց մեջ, իհարկե, դուռն առաջին թակողը Գուրգեն Մելիքյանն էր, կինը՝ Լաուրան, դուստրը՝ Մերին:

Սուրեն Վարդանյանի ամենաչսիրած բանը, ամենածանր ժամերը Հայաստանում գտնվելու վերջին օրն էր լինում: Թեև ընկեր-բարեկամները հավաքվում, բարեմաղթանքներ էին ասում, կենացներ խմում, սակայն հոգու մի անկյունում ընդվզում էր ապրում և, գրեթե միշտ, դեռ օդանավ չնստած, մտածում էր՝ ե՞րբ պիտի վերադառնա:

Պիտի գար ու գար... 2020-ին էլ պիտի գար: Չեկավ: Հիվանդ սիրտը դավաճանեց:

Հայրենասեր ու հայասեր այդ մարդու հոգին այդպես էլ իրենը չդարձած հեռավոր օտար հողում ամփոփվեց՝
միշտ կարոտով առ իր հարազատ մայր ժողովուրդն ու Հայաստան աշխարհը՝ նման Համաստեղի «Երանոս

աղբար» պատմվածքի հերոսին, ով, ապրելով սփյուռքում, իր ողջ կյանքում տենչում էր Հայաստան վերադառնալ ու երբ մահից հետո հայտնվում է ոսկեգեղ դրախտում, թախծում ու մորմոքում, զայրանում ու ընդվզում է, ՝ բողոքելով. «Ըսել է ալ Հայաստան, էնտեղ, մեր երկիրը չպիտի երթա՞մ»:

Մի վերջին մաղթանքով ընդունենք, որ Սուրենի հայրենանվեր հոգին այս հուշով նորից շրջագայության է եկել Հայաստան, հաստատենք, որ այդ վերադարձը ամեն տարի է կրկնվելու, քանի կան նրան ճանաչ մարդիկ, ժայռերին ու ծերպերին կառուցված վանքերը, դեպի այդ խորխորատներն ու զմայլելի անտառները տանող ասֆալտապատ ու հողաշեն՝ հայրենի տուն տանող ճամփաները:

Սուրեն Վարդանյանի հիշատակը նաև շարունակվելու է նրա անունով «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից Բերձորում (ուր հաճախ էր լինում Սուրենը) տնկված ծառերի տերևների սոսափյուններում ու Արցախի այն «անծանոթ» գյուղացու ամենօրյայում, ում ուղարկվեցին Սուրենի և ընկերների կողմից հայթայթված գումարով գնված երկու խոշոր եղջերավոր կենդանիները:

Հիշատակդ վա՛ռ, Սուրեն Վարդանյան, քո ողջ կյանքը նման եղավ համեղ եղաձուի:

Իրողությունների մասնակից և ականատես՝

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ,
Բան.գիտ.դոկ., պրոֆեսոր

## ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Հրաշալի կերպար, հրաշալի մարդ, հրաշալի անհատ, որի կյանքը լավ օրինակ է, թե աշխարհ գալով ո՞րն է քո առաքելությունը՝ ապրել անձնական կյանքո՞վ, պարփակվել սեփական խնդիրների մե՞ջ, թե՞ մարդկանց, եթե չասենք՝ ողջ աշխարհի հոգսերը վերցնել քեզ վրա: Գուրգեն Մելիքյանը նախընտրեց վերջինը, որն էլ խոսում է նրա վեհության մասին: Բնությունն էլ իր հերթին անչափ շռայլ է եղել նրա նկատմամբ՝ պարգևել պատկառելի կերպար, պատկառելի կեցվածք, մանավանդ՝ մեծ հոգի:

Նա ունի հիանալի մարդկային գծեր, որոնց շարքը կարելի է անվերջ շարունակել: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ համալսարանական ավելի քան 60 տարիների ընկերության բարձունքից մի քանի խոսք ասել Գուրգեն Մելիքյանի՝ մարդու, անհատի և իմ լավ ընկերոջ մասին, որն իր կերպարով, իր արած և այսօր էլ շարունակվող գործերով արժանացել և արժանանում է մեծ հարգանքի և սիրո:

Գուրգեն Մելիքյանն իր կերպարով շատերի հա-մար դարձել է հոգեհարազատ մարդ: Ընդ որում նա այդ ամենը կատարում է ոչ թե երևալու, իր մասին խոսելու, մեծարվելու համար, այլ կատարում է, որովհետև դա իր էությունն է: Նա այլ կերպ չի կարող ապրել:

Այո՛, նա ապրում է ուրիշների կյանքով: Նա անտարբեր չէ դիմացինի ցավի, հոգսերի նկատմամբ, քանզի ապրում է այդ ամենով և օգնության ձեռք է մեկնում բոլորին:

Գուրգեն Մելիքյանն անցել է կյանքի մեծ ճա-նապարհ: Նրա իր կերպարը ձևավորվել է ոչ միայն տանը, իր ընտանիքում, այլև ծնողներից ժառանգած գծերին ավելացրել է իր սեփականը, իր ձեռագիրը և դարձել համալսարանականների և շատ ուրիշների սիրելի, ընդունելի անձնավորություն:

Ես բախտ եմ ունեցել Գուրգեն Մելիքյանին ճանաչելու, նրա հետ համալսարանում սովորելու տարիներին շփվելու, և հետագա տասնամյակներում համատեղ աշխատելու, ընկերություն անելու, որը շարունակվում է առ այսօր:

Գուրգեն Մելիքյանը տասնամյակներ շարունակ գլխավորել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ էստաֆետը ստանալով ճանաչված արևելագետ, թուրքագետ Մերի Քոչարից, իսկ հետո՝ սիրով և վստահությամբ այն փոխանցել է հիանալի մի անձնավորության՝ իր ուսանողին (նաև իմ ուսանողին), ճանաչված թուրքագետ Ռուբեն Մելքոնյանին: Անկախ այդ փոփոխություններից՝ Գուրգեն Մելիքյանը այսօր էլ շարունակում է իր բեղմնավոր, ազգօգուտ կյանքն ու գործունեությունը: Նրա պատվին և անունով է հիմնվել երկուսուկես տասնամյակ առաջ ստեղծված «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմ-նադրամը», որի միջոցով կատարվում է հսկայական բարեգործական աշխատանքներ Արցախի Հան-րապետությունում: Մելիքյանը օգնում և խրախուսում է այնտեղ ապրող բոլոր ընտանիքներին, բազմաթիվ անվճարունակ ուսանողներին և այլն: Նա այդ ամենը իր կյանքի իմաստն է դարձրել և կատարում է մեծ սիրով ու երիտասարդական եռանդով:

Գուրգեն Մելիքյանը նաև հիանալի ընտանիք ունի: Տղան՝ Վահագնը, որը նաև իմ լավ ուսանողներից է, ճանաչված դիվանագետ է, եղել է տարբեր երկրներում դեսպան և այսօր էլ շարունակում է իր գործունեությունը՝ բարձր պահելով Մելիքյանների ընտանիքի պատիվը:

Գուրգեն Մելիքյանի մասին, նրա կատարածի մասին վերը շարադրած բավական համառոտ և նաև մի փոքր զգացմունքային իմ մտքերը ես գրեցի նաև այն պատճառով, ավելի ճիշտ՝ այն առիթով, որ վերջերս լույս տեսավ իմ մենագրությունը՝ «Հայաստանի անկախացման հասարակական-քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը (1958թ. փետրվար-1991թ. սեպտեմբեր)» որը նա շատ հավանեց և նախաձեռնեց ևս 100 օրինակ հրատարակել իր հիմնադրամի միջոցներով, որի համար շատ շնորհակալ եմ:

Ես փորձեցի սրտանց մի քանի խոսք ասել իմ լավ ընկերոջ՝ Գուրգեն Մելիքյանի մասին և հավաստել, որ նա այն եզակի անհատներից է, որն արժանի է մեծ հարգանքի և մեծարման:

Իսկ որ Գուրգեն Մելիքյանը վայելում է բարի ու մեծ համբավ և ժողովրդականություն, դա կայացած իրողություն է, որը նա վաստակել է իր կյանքով, իր հայրենանվեր գործունեությամբ:

ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
15.07.2020թ.

## 2020թ. ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Հ/հ | Ամսաթիվ | Անուն, ազգանուն | Վճարման նպատակ | Գումար-ՀՀ դրամ | Համարժեք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 08.01.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 60000 | |
| 2 | 09.01.20 | Շահնազարի Սարո | ԽԵԱ ծրագիր | 506400 | 800 GBP |
| 3 | 13.01.20 | Պողոսյան Հրաչուհի | Օգնություն | 96000 | |
| 4 | 30.01.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 60000 | |
| 5 | 30.01.20 | Ազիզյան Սոֆի | Օգնություն | 70000 | |
| 6 | 10.02.20 | ԵՊՀ հիմնադրամ | ֆին. Աջակցություն | 300000 | |
| 7 | 27.02.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 60000 | |
| 8 | 01.04.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 60000 | |
| 9 | 20.04.20 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝մեր սիրելի մայ-րիկի՝ Գյուլիզար Այվազյան-Ժամկոչյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկե-պսակի /19.04. 2020/ Բեյրութ Բուրջ Համուդ | 20000 | |
| 10 | 20.04.20 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի. ծրագիր՝ անանման Վահե Կազանչյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /31.01.2020/ | 20000 | |
| 11 | 20.04.20 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝ իմ սիրելի Քրիստափոր Կազանչյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /20.01.2020/ | 20000 | |
| 12 | 20.04.20 | Ջանգոզյան Վարդան | Օգն. ծառերի ծրագիր՝ Խաչատուր Չափարյանի հիշատակին ՝ ի փոխան ծաղկեպսակի /28.01.2019/ | 48550 | 100 USD |
| 13 | 20.04.20 | Մելիքյան Գուրգեն | ԽԵԱ ծրագիր՝ Նորամայր /Նորա/ և Հարմիկ Ավանեսյաններից | 145650 | 300 USD |
| 14 | 06.05.20 | Cowansvilleholdings limited C/O commonwealth trust limited drake chambers VG road town, Tortola | Charity | 12007136 | 24980 USD |
| 15 | 07.05.20 | G. Melikyan Multichildren family | For Alajajyan book print | 3865120 | 8000 USD |
| 16 | 07.05.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 60000 | |
| 17 | 14.05.20 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռուբեն Գրիգորյանի հիշատակին ՝ ի փոխան ծաղկեպսակի /11.11.2019/ | 20000 | |
| 18 | 14.05.20 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Tony S. Kahve | 491000 | 1000 USD |
| 19 | 01.06.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 100000 | |
| 20 | 01.06.20 | Աբրահամյան Գարուշ | Համաձայն առք ու վաճա ռքի պայմանագրի | 5000000 | |
| 21 | 04.06.20 | Մելիքյան Գուրգեն | ԽԵԱ ծրագիր՝ Նորայր և Ռիմա Ավանեսյաններից | 242500 | 500 USD |
| 22 | 05.06.20 | Միրզոյան Վարդգես | Օգնություն | 60000 | |
| 23 | 17.06.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ֆինանսական աջակցություն | 500000 | |
| 24 | 02.07.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 100000 | |
| 25 | 14.07.20 | Նորիկ Ավանեսյան | TREE PROJECT | 48800 | 100 USD |
| 26 | 04.08.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 100000 | |
| 27 | 06.08.20 | Լիլիթ և Արմոնդ Վարդանյաններ | Օգնություն Տավուշին | 244000 | 500 USD |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 28 | 06.08.20 | Մելիքյան Գուրգեն | tree project, in the memory of our dear Hasmik Kabulian /01.08.2020/ | 20000 | |
| 29 | 07.08.20 | Միրզոյան Վարդգես | Օգնություն | 60000 | |
| 30 | 24.08.20 | Tony S Kahve | Donation for Tavush | 244000 | 500 USD |
| 31 | 01.09.20 | Սիրեկանյան Արսեն | Նվիրատվություն | 100000 | |
| 32 | 07.09.20 | Միրզոյան Վարդգես | Օգնություն | 60000 | |
| 33 | 10.09.20 | Ալֆա ֆուդ սերվիս ՍՊԸ | Օգնություն | 340000 | |
| 34 | 23.09.20 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Լևոն Գևորգյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /20.09.2020/ | 20000 | |
| 35 | 23.09.20 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Սեդա Մելիքսեթյան-Բեգլարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /30.12.2019/ | 20000 | |
| 36 | 23.09.20 | Հարությունյան Սամսոն | Ծառերի ծրագիր | 97600 | |
| 37 | 23.09.20 | Սիմոնյան Արտուշ | ԽԵԱ ծրագիր | 341600 | |
| 38 | 23.09.20 | Միքայելյան Ժաննա | ԽԵԱ ծրագիր | 683200 | |
| 39 | 30.09.20 | Հակոբ և Ներսես Գույումջյաններ | Օգնություն ծառայող զինվորների բազմազավակ ընտանիքներին | 115400 | 200 EUR |
| 40 | 05.10.20 | Ավանեսյան Նորամայր և Հարմիկ | Օգնություն Արցախյան պատերազմից տուժած բազմազավակ ընտանիքներին | 97300 | 200 USD |
| 41 | 05.10.20 | Ալադադյան Վահան | Օգնություն Արցախյան պատերազմից տուժած բազմազավակ ընտանիքներին | 231570 | 476 USD |
| 42 | 05.10.20 | Թոնի Կահվե | Օգնություն Արցախյան պատերազմից տուժած բազմազավակ ընտանիքներին | 250000 | |

**26985826**

## COW" PROJECT 2020: LIST OF RECIPIENTS & SPONSORS

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 472 | Khalapyan Kristine<br>Shaushyan Andranik | v. Aghavno | 4 | 1st | 3373 | Vartanian Lilit & Armond /USA/ |
| 473 | Feodorova Tatiana<br>Hambardzumyan Karen | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3358 | Vanetsyan Stepan /Switzerland/ |
| 474 | Zakharyan Arevik (*Single*) | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3392 | Vanetsyan Grigor /Switzerland/ |
| 475 | Arakelyan Ofik *(Single)* | v.Ishkhanadzor | 4 | 1st | 3379 | Vanetsyan Ashot /Switzerland/ |
| 476 | Sargsyan Alina<br>Aslanyan Argam | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3351 | Vanetsyan Gevorg /Switzerland/ |
| 477 | Khachatryan Varduhi<br>Arakelyan Vitaly | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3384 | Vanetsyan Gabriel /Switzerland/ |
| 478 | Matevosyan Nona<br>Matevosyan Mayis | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3344 | Vanetsyan Mariam /Switzerland/ |
| 479 | Avagyan Naira<br>Sargsyan Albert | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3374 | Vanetsyan Veronika /Switzerland/ |
| 480 | Muradyan Manana<br>Galoyan Tigran | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3355 | Vanetsyan Karen & Veronika /Switzerland/ |
| 481 | Grigoryan Aregnaz<br>Aghabekyan Artush | v. Ishkhanadzor | 5 | 1st | 3325 | Vanetsyan Karen & Veronika /Switzerland/ |
| 482 | Grigoryan Aida | v. Ishkhanadzor | 4 | 1st | 3375 | Khachatryan Aram |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Matevosyan Davit | | | | | Chobanyan Aida /USA/ |
| 483 | Andryan Nona<br>Aghabekyan Davit | v.Ishkhanadzor | 5 | 1st | 3500 | Simonyan Armine & Artush /Armenia/ |
| 484 | Kostanyan Naira<br>*(Single)* | v. Hak | 5 | 1st | 3336 | Petrosyan Alexander /Armenia/ |
| 485 | Sultanyan Tatiana<br>Sultanyan Zenetaul | v. Kumayri,<br>Shirak community | 7 | 1st | 3320 | Mikayelyan Zhanna & Artashes /Russia/ |
| 486 | Ajemyan Lusine<br>Galstyan Hakob | v. Sus | 7 | 2nd | 3318 | Mikayelyan Zhanna & Artashes /Russia/ |
| 487 | Kirakosyan Laura<br>Khachatryan Arsen | v. Vakunis | 4 | 1st | 5797 | Halebi Anahit & Gabriel /USA/ |
| 488 | Ohanyan Termine<br>Ohanyan Samvel | v. Pakahan | 4 | 1st | 3359 | Astkhik Star Zakian /USA/ |
| 489 | Ohanyan Ani<br>Grigoryan Aramayis | c. Berdzor | 4 | 1st | 3357 | Javakov Zara /USA/ |
| 490 | Manvelyan Shahane<br>*(Single)* | v. Gihut | 6 | 1st | 3340 | Javakov Zara /USA/ |

## 2020 թ. ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

| Հ/h | Ամսաթիվ | ԲՈՒՀ | Նպատակ | Գումար |
|---|---|---|---|---|
| 1 | 12.02.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ, ֆարմ.մագիստր.1-ին կ. | 60000 |
| 2 | 12.02.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բ.3-րդ կ. | 60000 |
| 3 | 12.02.20 | ԵՊՀ հիմնադրամ | Կիրակոսյան Յուրիկ, իրավագիտ. 3-րդ կ. | 100 000 |
| 4 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Խաչատրյան Արսեն, արև. իրան. 4-րդ կ. | 20000 |
| 5 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դարբինյան Մնացական, արև,իրան. 4-րդ կ. | 20000 |
| 6 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սուքիասյան Արտյոմ, արև. իրան. 3-րդ կ. | 25000 |
| 7 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Կարապետյան Տարոն արև., իրան. 2-րդ կ. | 25000 |
| 8 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մուրադյան Հայկ, արև. իրան. 4-րդ կ. | 25000 |
| 9 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սարգսյան Էրիկ, արև.արաբ. 3-րդ կ. | 30000 |
| 10 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բաբիկյան Աշոտ, արև, արաբ. 3-րդ կ. | 30000 |
| 11 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Հովհաննիսյան Տիգրան, արև, իրան.4-րդ կ. | 30000 |
| 12 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Հարությունյան Պերճ, արև. թյուրք. պատմաբան. մագիստր. 1-ին կ. | 30000 |
| 13 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Կոստանդյան Վահան, արև, թյուրք. 4-րդ կ. | 30000 |
| 14 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սանեյան Արման, պատմ. 5-րդ կ. հեռակա | 50000 |
| 15 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Հովհաննիսյան Տիգրան, արև իրան. 2-րդ կ. | 60000 |
| 16 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բաղալյան Արթուր, արև.. արաբ. 4-րդ կ. | 60000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սրապյան Արա, արև. իրան.2-րդ կ. | 60000 |
| 18 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Զաքարյան Հակոբ, արև.իրան. 4-րդ կ. | 60000 |
| 19 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մուրադյան Անուշ, արև.թյուրք.1-ին կ. | 80000 |
| 20 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բաղդասարյան Հրայր, արև.արաբ. 4-րդ կ. | 80000 |
| 21 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Հակոբյան Հասմիկ, հայ. բ. 1-ին կ. | 80000 |
| 22 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Միքայելյան Անի, ժուռնալիստ.1-ին կ.(բացառութ.) | 80000 |
| 23 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Շեյխուկ Շանթ, ԻԿՄ 4-րդ կ. | 100000 |
| 24 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Փիլիպոսյան Գոռ, մաթեմ.,կիրառ.վիճ. և տվյալ. գիտ. 1-ին կ. | 100000 |
| 25 | 03.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բաղդասարյան Լիլիանա, ԻԿՄ 4-րդ կ. | 120000 |
| 26 | 04.03.20 | Արցախի պետ.հմլս. | Սարգսյան Լուսինե, պատմ. և իրավ. 2-րդ կ. (բացառութ.) | 80000 |
| 27 | 04.03.20 | ՀԱՊՀ հիմնադրամ | Թորոսյան Գեորգի 5-րդ կ.(բացառութ.) | 100000 |
| 28 | 04.03.20 | Արցախի պետ. հմլս. | Խաչատրյան Նանար,պատմ.և իրավ.4-րդ կ. | 100000 |
| 29 | 04.03.20 | ՀՃԾՊՀ հիմնադրամ | Տեր-Սահակով Արսեն,ՃԾՀԱՀ 4-րդ կ.(բացառութ) | 120000 |
| 30 | 04.03.20 | Հայաստանի ամերիկյան հմլս. | Սարգսյան Իոաննիս-Սարանդոս, անգլ. և հաղորդ. 2-րդ կ. | 150000 |
| 31 | 05.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սարգսյան Նաիրա, կենսաբ.3-րդ կ.հեռակա | 80000 |
| 32 | 11.02.20 | Շուշիի Գյուրջյանի անվ. արվ. Ինստ. | Սայամյան Արմեն,արվեստի բ.4-րդ կ.(բացառութ) | 100000 |
| 33 | 17.03.20 | Գրիգոր Նարեկացի համալսարան | Խաչատուրյան Դավիթ, ՆԶՊ 4-րդ կ. հեռակա | 50000 |
| 34 | 17.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագիստր. 1-ին կ. | 30000 |
| 35 | 17.03.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բ.ֆակ. 3-րդ կ. | 30000 |
| 36 | 27.04.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագիստր.1-ին կ. | 30000 |
| 37 | 27.04.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի,հայ բանասիր.ֆակ. 3-րդ կ. | 30000 |
| 38 | 28.04.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մաջիդ Վալիօլլահ Քարիմի, իրանագիտ. ասպիրանտ. 1-ին կ. | 150000 |
| 39 | 04.05.20 | ԵՊՀ հիմնադրամ | Փիլիպոսյան Լևոն, Արաբագիտ. 4-րդ կ. | 30000 |
| 40 | 04.05.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մխիթարյան Խաչատուր, թյուրք.. 4-րդ կ. | 30000 |
| 41 | 04.05.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սեփանյան Սիսիան, թյուրք. 4-րդ կ. | 200000 |
| 42 | 27.05.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագիստր. 1-ին կ. | 60000 |
| 43 | 27.05.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի,հայ բանասիր. ֆակ.3-րդ կ. | 60000 |
| 44 | 08.06.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մանասյան Մարիամ թյուրք. 3-րդ կ. | 50000 |
| 45 | 08.06.20 | ԵՊՀ հիմնադրամ | Գյուլումյան Գևորգ, հայ. բանաս. 4-րդ կ. | 50000 |
| 46 | 18.08.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սայադյան Սերոբ, միջազգային հարաբ. 5-րդ կ. հեռակա | 100000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 47 | 18.08.20 | ՀՃԾՊՀ հիմնադրամ | Ոսկանյան Լուսինե, դիզայն 1-ին կ. | 250000 |
| 48 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Սարգսյան Էրիկ, արև., արաբ. 4-րդ կ. | 25000 |
| 49 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բարսեղյան Վահագն, արև., արաբ. 4-րդ կ. | 25000 |
| 50 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բիջոյան Տիգրան, արև.թյուրք. 3-րդ կ. | 25000 |
| 51 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Վարդանյան Արսեն, արև. թյուրք. 3-րդ կ. | 30000 |
| 52 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բիջոյան Գեղամ, արև.արաբ. 4-րդ կ. | 30000 |
| 53 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ղարագյուզյան Լիլիթ, արև. թյուրք .1-ին կ. | 100000 |
| 54 | 24.09.20 | Մ. Հերացու անվ. ՊԲՀ հիմնադրամ | Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ.3-րդ կ. | 100000 |
| 55 | 24.09.20 | Մ. Հերացու անվ. ՊԲՀ հիմնադրամ | .Սիմոնյան Սարկիս, ատամնաբուժ. 1-ին կ. | 100000 |
| 56 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Կիրակոսյան Յուրիկ,, իրավագիտ. 4-րդ կ. | 100000 |
| 57 | 24.09.20 | Հայաստանի ամերիկյան հվլս. | Սարգսյան Իոաննիս-Սարանդոս, հում և հասարակ. անգլ. հաղորդ. 3-րդ կ. | 150000 |
| 58 | 24.09.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մաջիդ Վալիօլլահ Քարիմի, իրանագիտ. ասպիրանտ. | 200000 |
| 59 | 02.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Եղիազարյան Ամալյա, հոգեբ. 1-ին կ. | 100000 |
| 60 | 02.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մուրադյան Անուշ, արև. թյուրք. 1-րդ կուրս /Վակունիս/-բացառություն | 100000 |
| 61 | 02.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բաղալյան Դավիթ, իրան. պատմաբանասիր. մագիստր. 2-րդ կ. | 100000 |
| 62 | 02.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Հակոբյան Հասմիկ, հայ բանասիր. 2-րդ կ. | 120000 |
| 63 | 02.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Միերյան Դավիթ, արաբ. 4-րդ կուրս /ապրիլյանի մասնակից/ | 150000 |
| 64 | 23.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագ. 2-րդ կ. | 30000 |
| 65 | 23.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր.ֆակ.4-րդ կ. | 30000 |
| 66 | 29.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ.կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագ. 2- րդ կ. | 30000 |
| 67 | 29.10.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի,հայ բանասիր.ֆակ. 4-րդ կ. | 30000 |
| 68 | 20.11.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ,ֆարմ.մագիստր.2-րդ կ. | 30000 |
| 69 | 20.11.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի,հայ բանասիր.ֆակ. 4-րդ կ. | 30000 |
| 70 | 20.11.20 | ԵՊՀ հիմնադրամ | Մխիթարյան Խաչատուր, արև.թյուրք. 1-ին կ. | 80000 |
| 71 | 20.11.20 | ԵՊՀ հիմնադրամ | Բարսեղյան Վահագն, արև.արաբագիտ.4դ կ. | 112500 |
| 72 | 22.12.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դր. Նազելի Չարչյանի անվ.կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմ. մագ. 2-դ կ. | 30000 |
| 73 | 22.12.20 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան. Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր.4-դ կ. | 30000 |
| 74 | 28.12.20 | ԵՊՀ հիմնադրամ | Դավթյան Մխիթար,արև.թյուրք. պատմաբան.մագիստրատուրա 2-դ կ. | 150000 |

Ընդամենը՝ **5 332 500**

**ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՑՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԵԶ ՓՈԽԱՆՑԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Հայաստան
Account name: Gurgen Melikian Kashatagh Multi-Children Family Foundation
Bank Name: Ardshininvest Bank Kashatagh Branch SWIFT Code: ASHBAM22
Account Number (AMD): 24 7380007473 0000
Account Number (USD): 247380007473 0001
Account Number (EUR): 247380007473 0010

ԱՄՆ/USA
Bank Name: Bank of America Account Name: GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH Account Number (USD): 3250 3528 6985

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝**
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
**Բան.գիտ. դոկտոր պրոֆեսոր**

**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝**

**ԱՎԱԳՅԱՆ Ա, բ.գ.դ., պրոֆեսոր**
**ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ.գ.թ. պրոֆեսոր**
**ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ.գ.թ., պրոֆեսոր**
Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի

**ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ 99 Թերթը Բաժանվում է անվճար:**

**Խմբագրության հասցեն՝**

**Երևան-0025, Աբովյան 52Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ,**
**Հեռ. 060710629**
**055 -52- 29-36, 55-25 37, 52- 29- 36:**

# ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ,

# ՁԵՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՏԱՐ ԿԱՆԳՆԵՆՔ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ